Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի
ազգային համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի
2024 թվականի
հուլիսի 10-ի որոշմամբ, արձանագրություն №01-07/24:
Գիտական խորհրդի նախագահ,
ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար
Մ. Գ. Բարսեղյան

ԿԱՆՈՆՆԵՐ
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԷԹԻԿԱՅԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային Համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) էթիկայի կանոնները սահմանում են Համալսարանում գործարար կապի իրականացման, աշխատողների և ուսանողների փոխադարձ հարաբերությունների, վարքի ու վարքագծի դրսևորման սկզբունքները, ակադեմիական ազնվության քաղաքականությունը (այսուհետ՝ էթիկայի կանոններ) և դրանց ապահովման դրույթները:

2. Էթիկայի կանոնները կիրառվում են Համալսարանի բոլոր Աշխատողների (այսուհետ՝ Աշխատող), ասպիրանտների և Ուսանողների (այսուհետ՝ Ուսանողներ) հարաբերություններում:

3. Սույն կանոններով սահմանվում է ընդհանուր էթիկական արժեքներին, սկզբունքներին և նորմերին համապատասխան վարքականոն, որի նպատակն է՝

1) ուղղորդել Համալսարանի Աշխատողներին և Ուսանողներին՝ ապահովելու պատշաճ վարքագիծ.

2) ամրապնդել հանրության վստահությունը Համալսարանի և ակադեմիական կազմի նկատմամբ.

3) ապահովել վարքագծի սկզբունքների կիրառման միասնականությունը:

4. Սույն կանոնները խախտող աշխատողի և (կամ) ուսանողի նկատմամբ կարող է կիրառվել կարգապահական տույժ Համալսարանի աշխատողների կամ սովորողների ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով: Կարգապահական տույժը կիրառվում է էթիկայի հանձնաժողովում քննարկելու միջոցով: Էթիկայի հանձնաժողովը կազմավորվում է Համալսարանի ռեկտորի հրամանով:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ

5. Ղեկավար կազմի Աշխատողը (ռեկտոր, պրոռեկտոր) պարտավոր է՝

1) հարգել հանրության բարոյական նորմերը, մարդու արժանապատվությունը, անհարկի չընդգծել պաշտոնեական դիրքը.

2) լինել անկողմնակալ, օրինապահ, զուսպ, բարեկիրթ, համբերատար, հարգալից վարվի այն բոլոր անձանց նկատմամբ, ում հետ առնչվում է իր գործառույթներն իրականացնելիս.

3) չօգտագործել պաշտոնեական դիրքը՝ իր կամ այլ անձանց համար արտոնություններ, բացառություններ և այլ նպաստավոր պայմաններ ստեղծելու համար, որոնք կարող են վնասել Համալսարանի կրթական և գիտական գործընթացների կառավարմանը.

4) Համալսարանում իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս դրսևորել քաղաքական չեզոքություն և զսպվածություն.

5) թույլ չտալ, որ անձնական կամ այլ հարաբերություններն ազդեցություն ունենան պարտականությունների կատարման վրա.

6) չստեղծել բարոյահոգեբանական ճնշող մթնոլորտ, որն անմիջական ազդեցություն կարող է ունենալ գործընկերների վրա.

7) իր լիազորությունները կատարելիս խուսափել այնպիսի հարաբերություններից, որոնք առաջացնում են կամ կարող են առաջացնել շահերի բախում կամ որոնց առկայության պայմաններում հնարավորություն չի ունենա անաչառ և անկողմնակալ կատարել իր պարտականությունները.

8) նախատեսված ժամկետում մասնակցել նիստերին, չխոչընդոտել գործընկերների աշխատանքային պարտականությունների կատարմանը:

III. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ

6. Ակադեմիական կազմի Աշխատողը (այսուհետ ՝ Դասախոս) պարտավոր է՝

1) գիտակցել իր սոցիալական դերի, հետևաբար՝ հասարակության մեջ սոցիալական դերը գիտակցող անհատի ձևավորման գործում իր առաքելությունը.

2) հարգել Ուսանողի անհատականությունը՝ անկախ նրա ազգությունից, տարիքային, ֆիզիկական, մտավոր,անձնային առանձնահատկություններից, դավանանքից, ռասայից, սեռից, լեզվից, ընտանեկան և սոցիալական կարգավիճակից.

3) որոշումներ ընդունելիս գործել ազնվորեն՝ ցուցաբերելով քաղաքավարություն, ողջամտություն.

4) Համալսարանի գույքը, ֆինանսական միջոցները, տեղեկատվական միջոցները, էլեկտրոնային համակարգերը օգտագործել ծառայողական նպատակներով.

5) խուսափել սոցիալական ցանցերում անձնական այնպիսի լուսանկարներ և տեսագրություններ հրապարակելուց, որոնք կարող են Համալսարանին, գործընկերներին կամ Ուսանողներին վարկաբեկող լուրերի տարածման պատճառ հանդիսանալ, Համալսարանի մասին հրապարակումներում լինել զուսպ և անկողմնակալ.

6) Համալսարանում դրսևորել քաղաքական չեզոքություն, Համալսարանից դուրս՝ իր գործունեության ոլորտի շահառուների (Ուսանող, ծնող) նկատմամբ՝ զսպվածություն.

7) զերծ մնալ Համալսարանում կրոնական գործունեություն և քարոզչություն իրականացնելուց.

8) խուսափել նվեր ընդունել կամ տալ, եթե ողջամտորեն կարող է ընկալվել, որ այն կապված է մասնագիտական պարտականությունների իրականացման հետ, որը կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով ազդել իր կողմից իրականացվող մասնագիտական գործունեության որակի կամ համապատասխանության վրա:

IV. ԴԱՍԱԽՈՍ – ՈՒՍԱՆՈՂ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Դասախոսը պարտավոր է՝

1) Ուսանողների հետ իր հարաբերությունները կառուցել փոխադարձ հարգանքի վրա.

2) լսարանում ձևավորել բարենպաստ մթնոլորտ, որին կարող է հասնել նաև Ուսանողների վարքագծի կանոնները սովորեցնելու, հետևողականորեն դրանց կիրառմանն ուղղորդելու՝ սեփական օրինակի ճանապարհով.

3) անաչառ ու բարյացակամ լինել բոլոր Ուսանողների նկատմամբ, հետևողական՝ նրանց կրթական պահանջների բավարարման գործում, պատրաստակամությամբ արձագանքել այդ առնչությամբ ծագած բոլոր խնդիրներին.

4) նպաստել Ուսանողների մեջ այնպիսի դրական անձնային հատկանիշների ձևավորմանը, ինչպիսիք են ինքնակրթությունը, ուսման արժևորումը, ինքնադաստիարակությունը, ինքնուրույնությունը, ինքնավերահսկումը, պատասխանատվությունը.

5) նպաստել Ուսանողների ներանձնային և միջանձնային հարաբերություններում դրսևորվող դրական այնպիսի որակների զարգացմանը, ինչպիսիք են համագործակցելու, ապրումակցման, ուրիշներին օգնելու պատրաստակամությունը.

6) Ուսանողի մեջ սերմանել պատասխանատվություն Համալսարանի և հանրային սեփականություն համարվող գույքի պահպանման համար.

7) հարգել Ուսանողների մտքի, խղճի և դավանանքի ազատությունը, պատշաճ ուշադրություն դարձնել նրանց արտահայտած կարծիքներին ու հայացքներին և նրանց չպարտադրել իր սեփական հայացքները.

8) Ուսանողի հիմնարար իրավունքները երաշխավորելու համար հարգել յուրաքանչյուր Ուսանողի անձնական կյանքը և սոցիալական կայքերում չտարածել կամ չփոխանցել տեղեկություններ Ուսանողի մասին.

9) պահանջկոտ և հետևողական լինել բոլոր Ուսանողների նկատմամբ, ընդ որում՝ այդ պահանջկոտությունը պետք է հիմնավորված լինի և բխի գործընթացի կազմակերպման համընդհանուր շահերից.

10) գաղտնի պահել Ուսանողի անձնական կյանքին առնչվող տեղեկությունը, ինչպես նաև նրա կողմից իրեն վստահված գաղտնիքը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Ուսանողի անձին վերաբերող տեղեկությունը կարող է օգտագործվել բացառապես ի շահ Ուսանողի.

11) Ուսանողներին ծանոթացնել Համալսարանի սահմանած ներքին կարգապահական կանոններին, ուղղորդել, աջակցել և հետևել դրանց կատարմանը.

12) ելնելով իր, նաև ոլորտի հեղինակության պահպանման շահերից՝ անաչառ լինել Ուսանողներին գնահատելիս, գնահատումը պետք է լինի հիմնավորված և անկողմնակալ՝ բարոյական արժեքներին ու սկզբունքներին համապատասխան, Ուսանողների նվաճումները գնահատելիս՝ ձգտել օբյեկտիվության և արդարության, սեփական հայեցողությամբ չբարձրացնել կամ չիջեցնել Ուսանողների գնահատականները, առաջադիմությունն արհեստականորեն բարձրացնելու նպատակով Ուսանողների փոխարեն չուղղել թույլ տված սխալները կամ չքողարկել դրանք.

13) չդրսևորել կոպիտ, արհամարհական վերաբերմունք Ուսանողի անձի նկատմամբ, զերծ մնալ անհիմն, կրկնվող մեղադրանքներից:

8. Ուսանողը պարտավոր է՝

1) Համալսարանում կամ դրանից դուրս չառաջարկել կամ չընդունել կաշառք կամ որևէ այլ անօրինական ֆինանսական միջոց կամ չփորձել ստանալ կամ չստանալ որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իր ուսման կամ այլ անձանց աշխատանքի վրա,

2) Համալսարանի կանոններով նախատեսված՝ համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ ստանալու ցանկացած փորձի մասին,

3) չվատնել Համալսարանի ռեսուրսները, կամ ոչ իրավաչափ ձևով չօգտագործել Համալսարանի տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առևտրային այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի,

4) ցուցաբերել հարգալից վերաբերմունք Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորի, պրոռեկտորների, ստորաբաժանումների ղեկավարների, աշխատակազմի և Ուսանողների նկատմամբ՝ պահպանելով էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքները, և դրական ու կառուցողական ներդրում ունենալ Համալսարանի ակադեմիական գործունեության մեջ,

5) ուսման կամ հետազոտական գործունեության ընթացքում չզբաղվել գրագողությամբ, իրեն չվերագրել այլոց աշխատանքը կամ չներկայացնել այլ անձանց աշխատանքը որպես սեփական աշխատանք կամ չկեղծել աշխատանքի արդյունքները և պահպանել անձնական տվյալների պաշտպանության հետ կապված էթիկայի սկզբունքները,

6) ուսումնական գործընթացներին մասնակցելիս չխաբել, անհատապես կամ խմբակային չարտագրել այլոց աշխատանքը կամ ձեռք չբերել որևէ արտոնություն՝ ցանկացած ձևով դա խթանելու միջոցով կամ թույլ չտալ, որ իր անունից որևէ այլ անձի առաջարկվի խրախուսական որևէ միջոց:

V. ԱՇԽԱՏՈՂ - ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Աշխատողը պարտավոր է՝

1) ձգտել գործընկերների հետ ակտիվ համագործակցության, փոխադարձաբար հարգել և օգնել գործընկերոջը՝ ի շահ Համալսարանի: Գործընկերներին պետք է միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը.

2) պաշտպանել ոչ միայն իր, այլև Համալսարանի, յուրաքանչյուր գործընկերոջ հեղինակությունը: Ուսանողների կամ այլ անձանց ներկայությամբ չպետք է քննադատի գործընկերներին.

3) գործընկերների, դասախոսների և ղեկավարության աշխատանքային գործունեության գնահատականը տալ Համալսարանի ներսում, նրբանկատ կերպով, ոչ վիրավորական շեշտով, լինել անաչառ և հիմնավոր: Բամբասանքն անհանդուրժելի է Համալսարանում.

4) խուսափել աղմկահարույց իրավիճակներ ստեղծելուց և ընդհարումներ հրահրելուց, իսկ տարաձայնությունների առաջացման դեպքում ձգտել հարթել դրանք՝ ցուցաբերելով կառուցողական մոտեցում.

5) չթաքցնել գործընկերների գործած սխալներն ու զանցանքները, իր քաղաքական և կրոնական կողմնորոշումը չպարտադրել այլ անձանց.

6) կրթության ոլորտի Աշխատողների, սեփական իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության նպատակով համերաշխություն արտահայտել գործընկերների, նրանց միությունների օրինական պահանջներին:

VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՀՍԿՈՒՄԸ

10. Համալսարանում վարքականոնի կենսագործումն իրականացվում է անհատի գիտակցման, համարժեք վարքագծի դրսևորման, իսկ վերահսկողությունը՝ ինքնագնահատման, հասարակական կարծիքի զուգակցման ու համագործակցման միջոցով:

11. Հասարակական դերակատարումը պատշաճ իրականացնելու նպատակով Աշխատողի համար կարևոր է վարքականոնի կիրառումը իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս:

12. Համալսարանում Աշխատողների գործունեությունն ու վարքագիծը վերահսկելու,կարողությունը խթանելու նպատակով Համալսարանի համապատասխան ստորաբաժանումները պարտավոր են իրականացնել փաստաթղթի դրույթների պատշաճ իրազեկում, որոնք հասցեատերը պարտավոր է յուրացնել ու դարձնել իր գործելակերպի և մտադրությունների ուղեցույց:

13. Համալսարանի ղեկավարությունն իրավունք չունի Աշխատողից պահանջելու կամ սեփական նախաձեռնությամբ՝առանց Աշխատողի գիտության, հավաքելու նրա անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ, եթե դա ուղղակիորեն չի առնչվում վերջինիս կողմից իր աշխատանքային պարտականությունների կատարմանը:

VII. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆԸ

14. Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականությունը կանոնների և ընթացակարգերի համախումբն է, որը պետք է նպաստի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը, կրթության որակի բարձրացմանը, և ստեղծի բարենպաստ պայմաններ Ուսանողի ուսումնառության համար:

15. Ակադեմիական ազնվությունը նախատեսում է ակադեմիական աշխատանքների կատարումը՝ առանց գրագողության, խաբեության, ստելու:

16. Ակադեմիական ազնվության քաղաքականության նպատակն է՝

ա) պահպանել ակադեմիական ազնվության էթիկայի նորմերը և պահանջները,

բ) կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները,

գ) խթանել կրթության որակի բարձրացումը:

17. Ակադեմիական անազնվության դրսևորումներն են՝

ա) խաբեությունը, այսինքն՝ քննության ժամանակ արտագրությունն այլ Ուսանողից, ծածկագրերի, ինչպես նաև էլեկտրոնային տեխնիկայի օգտագործումը (հեռախոս, ականջակալ) չբացահայտելը.

բ) գրագողությունը, այսինքն՝ այլ անձանց գաղափարների, արդյունքների կամ ձևակերպումների օգտագործումը որպես սեփական մտքեր:

VIII. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

18. Սույն կանոնները Համալսարանի շահակիցներին մատչելի դարձնելու համար այն տեղադրվում է Համալսարանի պաշտոնական կայքի (nuaca.am) «Փաստաթղթեր» բաժնում:

IX. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19. Սույն կանոնները հաստատվում, փոփոխվում և լրացվում են Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

20. Սույն կանոններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի սեպտեմբերի 01-ից:

21. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կաննոներում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

22. Սույն կանոններն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցված է համարվում Համալսարանի գիտական խորհրդի 03.12.2018թ. №01-12/18 որոշմամբ հաստատված «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի էթիկայի կանոնները:

Գիտական քարտուղար Լ.Հ.Լևոնյան

«10» հուլիսի 2024թ.
Գիտխորհրդի որոշում
№01-07/24